ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

Դատական դեպարտամենտի կարիքների համար արխիվացման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/06» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «23» օգոստոսի 2019թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝
Արման Ղուկասյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ սնանկության դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝
Արմինե Ալիխանյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայրի պատասխանատու,
Լիլիթ Հովհաննիսյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի քարտուղար՝
Արուս Խաչատրյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ:

Գնահատող հանձնաժողովի նիստից բացակայում էին **Արևիկ Հարությունյանը** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Էրեբունի նստավայրի պատասխանատու և **Կարեն Մելքոնյանը** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար:

1. Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 4-րդ ենթակետով և «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/06» ծածկագրով հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ բաժնով («ԱՌԱՋԻՆ ՏԵՂԸ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ») նախատեսված փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ ՊՈԱԿ-ն սահմանված ժամկետում և հրավերով սահմանված կարգով ներկայացրել է հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի՝ հրավերի պահանջների նկատմամբ համապատասխանության վերաբերյալ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրվել է հետևյալ անհամապատասխանությունը.

-հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման մասին դիմումը (Հավելված 3) հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ՝ «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/06» ծածկագրով գնանշման հարցման հրավերի ՄԱՍ I-ի 7-րդ («ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ, ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ») բաժնի 7.22 կետով սահմանված իրավակարգավորման համաձայն:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

-մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանության մասին էլեկտրոնային եղանակով ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2019թ. օգոստոսի 28-ը ներառյալ, շտկել անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

-հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2019թ. օգոստոսի 29-ին ժամը՝ 10:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Արման Ղուկասյան

Անդամներ՝ Արմինե Ալիխանյան

Լիլիթ Հովհաննիսյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

Դատական դեպարտամենտի կարիքների համար արխիվացման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/06» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «29» օգոստոսի 2019թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝
Արման Ղուկասյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ սնանկության դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝
Արմինե Ալիխանյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայրի պատասխանատու,
Լիլիթ Հովհաննիսյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի քարտուղար՝
Արուս Խաչատրյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ:

Գնահատող հանձնաժողովի նիստից բացակայում էին **Արևիկ Հարությունյանը** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Էրեբունի նստավայրի պատասխանատու և **Կարեն Մելքոնյանը** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար:

1. **Տեղեկատվություն՝ արձանագրված անհամապատասխանությունը մասնակցի կողմից շտկելու վերաբերյալ.**
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ ՊՈԱԿ-ը սահմանված կարգով և ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունը:

2. **Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի՝ հրավերի պահանջների նկատմամբ համապատասխանության վերաբերյալ.**
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով սահմանված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունը՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ ՊՈԱԿ-ի մասնակցության իրավունքը և որակավորումը գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող անձնաժողովը որոշեց՝

1. հաստատել հայտերի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից հայտարարել ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ ՊՈԱԿ-ին,

2. հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է),

3. գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Արման Ղուկասյան

Անդամներ՝ Արմինե Ալիխանյան

Լիլիթ Հովհաննիսյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան